Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Այս աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6 =161=
1926
618 (47.925)

(Արտատպված Հ.Ս.Խ.Հ. Պետ. Համալսարանի Գիտական Տեղեկագրի № 1-ից)

Բժ. ԳՐ. ԱՐԵՇՅԱՆ

# ՀԱՅ ԿՆՈՋ ԿՕՆՔԸ ՅԵՎ ԾՆՆԴԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

(Լենինի անվան կլինիկական հիվանդանոց. Մանկաբարձական յեվ Գինեկոլոգիական կլինիկա):

Ընդունված է կարծել, որ հայ կինը, իբրև հարավցու, արբունքի հասակը սկսվում է 11-12 տարեկանից, համարելով միաժամանակ, որ այդ հասակում լինում է արբունքի առաջին և կարևոր նշանը՝ անդրանիկ դաշտանը:

Այդ կարծիքը ունեցել է դարեր շարունակ յուր բացասական հետևանքները: Դրա հիման վրա հայոց յեկեղեցին թույլատրում է վաղաժամ (12-13 տարեկան հասակում) ամուսնությունը և տիրող կառավարությունները օրինականացրել են այդ սովորությունը:

Մեր կլինիկայի տվյալները այլ պատկեր են ներկայացնում: 1923-24 թ. թ. ընթացքում մեր կլինիկայի մանկաբարձական բաժանմունքը ընդունել է 1905 կին: Դրանք բաժանվում են ըստ ծննդավայրի.

| | | | |
|---|---|---|---|
| Յերևան քաղ. և գավառից | 498 | Նախիջևանի գավառից | 96 |
| Եջմիածնի » | 81 | Սուրմալուի » | 215 |
| Լենինականի » | 58 | Ղարսի նահանգից | 132 |
| Լոռու-Փամբակի » | 26 | Վրաստանից | 138 |
| Դիլիջանի » | 12 | Ադրբեջանից | 143 |
| Նոր-Բայազեդի » | 37 | Տաճկական վիլայեթ. | 354 |
| Զանգեզուրի » | 33 | Ռուսաստանից | 56 |
| Դարալագյազի » | 8 | Պարսկաստանից | 12 |

Այսպիսով հարցաքննված հայ կանայք՝ աշխարհագրականորեն բազմաթիվ միջավայրերից են, վորով և ավելի յե հիմնավորվում մեր ընդհանրացումները:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս, թե բժշկական հարցաքննության յենթարկված հիշյալ կանանց մոտ առաջին անգամ դաշտանը քանի տարեկան հասակումն է յերևացել.

| | | | |
|---|---|---|---|
| 10 տարեկան հասակում | 4 | 16 տարեկան հասակում | 342 |
| 11 » » | 7 | 17 » » | 128 |
| 12 » » | 60 | 18 » » | 66 |
| 13 » » | 172 | 19 » » | 17 |
| 14 » » | 519 | 20 » » | 4 |
| 15 » » | 585 | 22 » » | 1 |

615-Ա42

*Այսինքն՝*

*10—13 տարեկանները կազմում են . 1,27%*
*14—16 » » » . 97,60%*
*17—22 » » » . 1,13%*

*Վերոհիշյալ թվերից հայ կնոջ համար դաշտանի միջին հասակը վորոշվում է —14,9 տարին։*

*Նույն հասակը ռուս կնոջ համար —15,4 տարին է (*Афиногенов)։ *Համեմատելով այս յերկու վերջին թվերը՝ մենք տեսնում ենք, վոր Սպիտակ ծովից մինչև Կովկասյան լեռները ապրող ռուս և Հայաստանում ապրող հայ կանանց դաշտանի հասակը տարբերվում է միայն կես տարով։*

*Այդ հանգամանքն ավելի հետաքրքրական է դառնում, յերբ մենք ուսումնասիրում ենք կոնքը և արբունքի ժամանակը ու տեսնում, վոր մեր կանանց կոնքը, ինչպես և ամբողջ կմախքը, իր ծայրագույն չափերին հասնում է բավականին ուշ՝ 25—30 տարեկան հասակում, իսկ սեռական կյանքը սկսվում է 10—15 տարով դրանից առաջ, յերբ կոնքը ուրեմն կանոնավոր կերպով դեռ չի զարգացել։*

*Կլինիկայի մանկաբարձական բաժանմունքում քիչ թե շատ յերկարատև աշխատելուց հետո՝ մինչև անգամ առանց կոնքը չափելու՝ արդեն աչքի յե ընկնում այն հանգամանքը, վոր մեր կանանց մեծամասնության համար մի կողմից կոնքի չափերն են պակաս, իսկ մյուս կողմից՝ ծննդի տևողությունը ընդհանուր նորմայից ավելի յերկար է։*

*Աչքի առաջ ունենալով այդ հարցի կարևորությունը, մենք հատուկ ուշադրություն դարձրինք կոնքի չափելուն և մեր որդինատորները սիստեմատիկորեն ստուգել են կոնքի բոլոր այն չափերը, վորոնք կատարվել են մանկաբարձական բաժանմունքում ընդունված յեղանակով։ 1923 և 24 թ. թ. ընթացքում այդպիսի դեպքեր ունեցել ենք 1124։*

*Կոնքի չափերի աղյուսակը մենք բաժանել ենք յերկու մասի և առանձին առանձին ենք կազմել առաջնածինների և բազմածինների համար։*

I—para **Տախ. I.**

| Կոնքի տարածությունը։ | Մինչև 17 տ. | | | | 18—22 տ. | | | | 23—30 տ. | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դեպքերի թիվը | Չափը | | | Դեպքերի թիվը | Չափը | | | Դեպքերի թիվը | Չափը | | |
| | | max. | min. | Միջին | | max. | min | Միջին | | max. | min. | Միջին |
| Dist. spin. | 56 | 26 | 20 | 22,79 | 238 | 27 | 20 | 23,0 | 174 | 27 | 20 | 23,4 |
| Dist. crist. | 56 | 29 | 21,5 | 25,63 | 238 | 29 | 22 | 26,1 | 174 | 28 | 23 | 26,33 |
| Conjug.ext. | 56 | 22 | 17 | 19,17 | 239 | 23 | 17 | 19,37 | 174 | 22 | 16 1/2 | 19,63 |
| Արգանդի հատակի բարձրութ. | 57 | 32 | 20 | 27 | 235 | 31 | 19 | 25,87 | 173 | 30 | 22 | 26,3 |

## M—para

| Կոնքի տարածությունը: | Մինչև 20 տ. | | | | 21—30 տ. | | | | 31—40 տ. | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դեպքերի թիվը | Չափը | | | Դեպքերի թիվը: | Չափը | | | Դեպքերի թիվը: | Չափը | | |
| | | max. | min. | Միջին | | max. | min. | Միջին | | max. | min. | Միջին |
| Dist. spin. | 36 | 25 | 20 | 22,8 | 413 | 27 | 20 | 23,25 | 206 | 27 | 21 | 23,72 |
| Dist. crist. | 37 | 28 | 23 | 25,72 | 413 | 29 | 22 | 26,4 | 205 | 30 | 23 | 26,42 |
| Conj. ext. | 36 | 21 | 18 | 19,4 | 414 | 23 | 17 | 19,62 | 205 | 22 | 18 | 19,9 |
| Արգանդի հատակի բարձրութ | 36 | 32 | 20 | 25,92 | 411 | 32 | 19 | 26,0 | 203 | 31 | 20 | 25,95 |

Կոնքի միջին չափերը, վորը մենք ստացել ենք, հետևյալն են:

Dist. spin. . . . *23,16*
Dist. crist . . . *26,10*
Conjug. exter. . . . *19,51*

Մյուս ազգերի համար՝

| | Dist. sp. | Dist. cr. | Con. ex. |
|---|---|---|---|
| Գերմանուհի (Bumm), Ամերիկուհի (Williams) | *26* | *29* | *21* |
| Ռուսուհի (Гусев) | *25* | *27* | *20,5* |
| Ֆրանսուհի (Reiffer, Fabre) | *24* | *2* | *20* |
| Հայուհի (մեր տվյալը) | *23,2* | *26,1* | *19,5* |

Այս համեմատական թվերից արդեն յերևում է, վոր հիշած ազգերի մեջ ամենափոքր կոնք ունեցողը հայ կինն է:

Ուսումնասիրելով կոնքի չափերի տախտակը՝ մենք պետք է վորոշ յեզրակացության գանք նաև կոնքի վոսկրների աճման մասին: Որինակ, Conjug. ext. թե առաջնածինների և թե բազմածինների համար, ըստ հասակի, աստիճանաբար մեծանում է, և 31 տարեկան հասակում հասնում է 19,9 cent., այսինքն՝ համարյա հավասարվում է ֆրանսուհիների conjugata-ին: Բացի դրանից միևնույն հասակում առաջնածինների միևնույն կոնքի չափերը ավելի փոքր են, քան թե բազմածիններինը:

Կոնքի այդպիսի թերաճման պատճառը, մեր կարծիքով, պետք է բացատրել արևելքի սովորությամբ. ըստ վորում ամուսնանում են, վոչ թե հասուն աղջիկները, այլ ուղղակի 11—12 տարեկան յերեխաները:

Պետք է յենթադրել, վոր սեռական օրգանների գործունեության արհեստական ձևով վաղաժամ արթնացնելը խոչընդոտ է հանդիսանում առհասարակ կմախքի նորմալ աճմանը: Մեր կլինիկայի նյութերի մեջ կան

դեպքեր (տասից ավելի), յերբ կինը ամուսնացել է 11—12 տարեկան հասակում, իսկ առաջին հղությունը ունեցել է 16–17 տարեկան հասակում. 5–8 անգամ ծնել է և վոչ մի անգամ դաշտան չի տեսել (սեռական գործարաններից արյունը յերևացել է միայն ծննդի միջոցին)։ Ուրեմն այդ կանայք դեռ արբունքի չհասած 4—5 տարի արդեն ապրել են սեռական կյանքով։ Պարզ է, վոր դրանք չեյին կարող ֆիզիքապես կանոնավոր զարգանալ։ Այդ մեր միտքը հաստատվում է նաև նրանով, վոր մեր կանայք 31 տարեկան հասակում ունենում են միջին չափի և ձևի կոնք, վորը նորմալ է Յեվրոպայի կանանց համար, ուրեմն թեպետ ուշ, այնուամենայնիվ մեր կանանց կոնքը հասնում է նորմալ չափերի։ Միևնույն ժամանակ մեր նորածինների միջին կշիռը հավասար է յեվրոպացիների միջին կշռին։

## I—para

Տախ. 2.

| Նորածինի չափերը։ | Մինչև 17 տարի | | | | 18—22 տ. | | | | 23—30 | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դեպքերի թիվը | Չափը | | | Դեպքերի թիվը | Չափը | | | Դեպքերի թիվը | Չափը | | |
| | | max. | min. | Միջին | | max. | min. | Միջին | | max. | min. | Միջին |
| Քաշը | 52 | 4300 | 2000 | 3281 | 204 | 4500 | 2200 | 3420 | 147 | 5100 | 2150 | 3498 |
| Յերկարությունը | 53 | 52 | 40 | 46 | 218 | 54 | 38 | 46,44 | 154 | 53,5 | 39 | 47,1 |
| Ուղիղ չափը | 53 | 13 | 9 | 11,16 | 218 | 13 | 8 | 11,2 | 154 | 13 | 10 | 11,2 |
| Շրջանակը | 53 | 40 | 28 | 33, 9 | 218 | 40 | 25 | 34,4 | 153 | 42 | 26 | 34,6 |

## M—para

| Նորածինի չափերը։ | Մինչև 20 տ. | | | | 21—20 տ. | | | | 31—40 | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դեպքերի թիվը | Չափը | | | Դեպքերի թիվը | Չափը | | | Դեպքերի թիվը | Չափը | | |
| | | max. | min. | Միջին | | max. | min. | Միջին | | max. | min. | Միջին |
| Քաշը | 15 | 4200 | 2250 | 3375 | 353 | 5000 | 2300 | 3496 | 167 | 4700 | 2200 | 3505 |
| Յերկարությունը | 17 | 50 | 41 | 44,4 | 356 | 53 | 31 | 46,9 | 180 | 55 | 38 | 47,0 |
| Ուղիղ չափը | 18 | 12 | 10 | 11,05 | 356 | 13 | 9 | 11,30 | 170 | 13,5 | 9 | 11,32 |
| Շրջանակը։ | 18 | 38 | 31 | 34,2 | 256 | 40 | 25 | 34,45 | 170 | 38 | 28 | 34,8 |

Նորածինների մասին ունեցած մեր տվյալները միանգամայն համապատասխան են առաջնածին և բազմածին մայրերի թե հասակին և թե կոնքի չափերին։

Որինակ՝ ընդհանրապես մոր հասակին համեմատ ավելանում է նորածնի կշիռը, բայց միևնույն հասակի առաջնածինների համեմատ բազմածինների նորածին յերեխաները ավել են կշռում։

Նորածինների վերաբերյալ մեր ունեցած միջին թվերը հետևյալն են.

| | |
|---|---|
| Քաշը . . . . . . . . | 3430,00 |
| Յերկարությունը . . . . | 46,30 |
| Գլխի ուղիղ չափը (fr.-oc.) . . | 11,21 |
| Շրջանակը ուղիղ և չափի վրայով . | 34,40 |

Մյուս ազգերինը՝

| | Քաշը | յերկարութ. | ուղիղ | շրջանակ. |
|---|---|---|---|---|
| Ամերիկացիների (Williams) | 3795,0 | 50,5 | 11,75 | 34,5 |
| Ռուսների (Михайлов) | 3200,0 | 50,5 | 11,75 | 34,0 |
| Գերմանացիների (Bumm) | 3 00,0 | 50,0 | 11,76 (Շրեդեր) | 34,0 |
| Ֆրանսիացիների (Varnier) | 32—3500,0 | 50,0 | 11,50 | 33,0 |
| Հայերի (մեր տվյալները) | 3430,0 | 46,30 | 11,21 | 34,4 |

Ուսումնասիրելով այդ թվերը մենք տեսնում ենք, վոր նորածինների միջին կշիռը, բացի ամերիկացիներից, բոլոր ազգերի մոտ հավասար են։ Նորածինների յերկարությունը բոլորի համար (բացի հայերից) կարելի յե ընդունել 50,25 և ուրեմն մեր նորածինների միջին յերկարությունը այդ ընդհանուր թվից պակաս է 4 cent.։ Այսպիսով մեր նորածինները միևնույն քաշն ունեն, բայց ավելի թիկնեղ են։

Բացի դրանից մի կարևոր հանգամանք է նկատվում գլխի չափերի մեջ։ Գլխի ուղիղ չափը կես cent. կարճ է ընդհանուր միջին թվից։ Այդ փաստը միանգամայն համապատասխանում է կոնքի conjugata-ին։ Այսպիսով կարող ենք ասել, վոր մեր նորածինների գլխի ձևավորումը (կոնֆիգուրացիան) ունի իր հատուկ յեղանակը — դա կայանում է նրանում, վոր գլուխը ավելի հարթ է ճակատից դեպի ծոծրակը։

Յեթե համեմատենք ամերիկուհու և հայուհու վերաբերյալ թվերը կստանանք՝

| | con. ex: | ուղիղ չ. | շրջանակ |
|---|---|---|---|
| Ամերիկուհի | 21,0 | 11,75 | 34,5 |
| Հայուհի | 19,5 | 11,21 | 34,4 |
| Տարբերությունը | 1,5 | 0,54 | 0,1 |

Սրանով ապացուցվում է, վոր յերբ conjugata-ների տարբերությունը 1,5 cent.-է, մեր նորածնի գլխի ուղիղ տարածությունը միայն 0,54 cent.-ով է պակաս։ Ուրեմն հայ կինը ծննդի միջոցին ավելի ծանր պայմանների մեջ է գտնվում, վորովհետև նրա ծննդաբերական 1,5 cent.-ով նեղ վոսկրե ողակը ստիպված է անցկացնել գրեթե նույն չափերի պտուղ, վորը և ամերիկուհին։

Բնությունը գալիս է օգնության հայ կնոջը, մի կողմից, ինչպես պարզվեց վերոհիշյալից, պտուղի գլուխն է ձևավորվում, և պակասեցնելով իր գլխավոր ուղիղ չափը՝ համարվում է կոնքին, իսկ մյուս՝ կողմից՝ վորը միաչափ կարևոր հանգամանքն է, յերկարանում է ծննդի տևողությունը։ Հետևյալ տախտակը վերաբերվում է ծննդի այդ տևողությանը։

## I—para

Տախ. 3.

| | Դեպքերի թիվը | Ծննդի տևողություն | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | I-շրջան | | | II-րդ շրջան | | | III-րդ շրջան | | | IV-րդ շրջան | | |
| | | max. | min. | Միջին | max. | min. | Միջին | max. | min. | Միջին | max. | min. | Միջին |
| Մինչև 17 տ. | 62 | 67ժ. | 2ժ25′ | 20 20′ | 8ժ30′ | „-5 | 1ժ16′ | 5-10 | „-5 | „-52 | 5- „ | „-5 | „-44 |
| 18—22 | 232 | 99-„ | „- 2 | 20-24 | 7- 30 | „-5 | 1- 12 | 4-20 | „-5 | „-43 | 9- 55 | „-7 | „-46 |
| 23—30 | 167 | 102-„ | 2-30′ | 22-25 | 7- 30 | „-5 | 1- 19 | 13-15 | „-5 | 1- 8 | 10-15 | „-3 | „-56 |

max. 103 ժ.-10′

Ընդհանուր տևողությունը min. 1 ժ.-40′

461 դեպքից Միջին 24 - 36′

## M—para

| | Դեպքերի թիվը | Ծննդի տևողություն | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | I-շրջան | | | II-րդ շրջան | | | III-րդ շրջան | | | IV-րդ շրջան | | |
| | | max. | min. | Միջին | max. | min. | Միջին | max, | min. | Միջին | max. | min. | Միջին |
| Մինչև 20 տ | 26 | 38-10 | 1-40 | 16-35 | 4-45 | - 5 | 57 | 2-30 | -5 | -27 | 5-20 | - 5 | -31′ |
| 21—30 | 415 | 88- | -35 | 14-15′ | 7. 30 | - 2 | 1- 8′ | 8-20 | -2 | -24 | 12-10 | - 2 | -37,2′ |
| 31—40 | 197 | 124-50 | -45 | 16-48 | 6-30 | - 3 | -48,8 / 58′ | 11-50 | -2 | -24,7 / 25, | 13- | - 2 | -55′ |

max. 129 ժ.-50′

Ընդհանուր տևողությունը min. 1 ժ.- “

632 դեպքից Միջին 16 ժ.-42′

Վերցնելով ծննդի տևողության ընդհանուր միջին թիվը մենք ստանում ենք.

| | max. | min. | միջին |
|---|---|---|---|
| Առաջնածինների համար | 103 ժ.—10′ | 1 ժ.—40′ | 24 ժ.—36′ |

Բազմածինների » 129 ժ.— » 1 »— » 16 »—42′

Մյուս ազգերի համար այդ թվերը այլ են.

| | | I-ին ծին. | Բ-ծին. |
|---|---|---|---|
| Ռուս կին | (Добрынин) | 20 ժ.— ″ | 10—12 ժ.— ″ |
| | (Михайлов) | 19 ժ.—25′ | 12 ժ.—35′ |
| Գերմանուհի | (Bumm) | 15 ժ.— » | 10 ժ.— » |
| Ամերիկուհի | (Williams) | 14 ժ.— » | 8 ժ.— » |
| Ֆրանսուհի | (Varnier) | 13 ժ.—20′ | 7—8 ժ.— » |
| Հայուհի | (մեր տվյալները) | 24 ժ.—36′ | 16 ժ.—42′ |

Ուրեմն հայ կնոջ ծննդի ընդհանուր միջին տեվողությունը 6—8 ժամ ավել է քան ուրիշ ազգերի կանանցը: Ավելի մոտ քննելով ծննդի տեվողության ցուցակը, տեսնում ենք, վոր այդ ավելի ժամերը ընկնում են մասամբ բացման և մասամբ արտամղման շրջանին:

Հետևյալ թվերից հաստատվում է այդ յեզրակացությունը արտամղման շրջանի մասին.

| | I-ին ծին. | Բ-ծին. |
|---|---|---|
| Ֆրանսուհի (Varnier) | 1 ժ.—37′ | » —29′ |
| » (Dubrisay) | 1 ժ.— 2′ | » —10—15′ |
| Գերմանուհի (Bumm) | 1 ժ.—30′ | » —45′ |
| Ամերիկուհի (Williams) | 1 ժ.—45′ | » —15—30′ |
| Հայուհի (մեր տվյալները) | 2 ժ.—21′ | 1ժ. —20′ |

Ընդգրկելով այս բոլորը՝ գալիս ենք հետևյալ յեզրակացությունների.

1. Հայ կնոջ համար արբունքի հասակն է 15 տարին:

2. Լրիվ և կանոնավոր ֆիզիքական զարգացման հայ կինը հասնում է 25—30 տարեկան հասակում:

3. Կոնքի միջին չափերն են.

| | | |
|---|---|---|
| Dist. spin. | . | 23,16 |
| » crist. | . | 26,10 |
| Conj. ext. | . | 19,51 |

Նորածնի միջին չափերն են.

| | | |
|---|---|---|
| Քաշը | . | 3430,0 |
| Յերկարությունը | . | 46,30 |
| Գլխի ուղիղ չափը | . | 11,21 |
| Շրջանակը | . | 34,40 |

Ծննդի տեվողությունն է

| | | |
|---|---|---|
| I ծինների | . | 24ժ—36′ |
| Բազմածինների | . | 16ժ—42′ |

4. Դարերի ընթացքում արևելքի պայմաններում հայ կինը սկսել է իր սեռական կյանքը վաղաժամ, վորով և բացատրվում է նրա ֆիզիքական թերաճումը:

Հայաստանի Ս. Խ. Հ. Պետ. Համալսարանի գիտական տեղեկագիր

# Le bassin et la durée

## D'ACCOUCHEMENT CHEZ L'ARMÉNIENNE

Docteur G. Arechian

(Clinique d'accouchement de l'Hôpital Lenin.)

L'auteur en se basant sur la mensuration des bassins et ses observations, produites à la clinique d'accouchement trouve:

1. La menstruation, chez la jeune fille arménienne, commence à 14,9 ans, contrairement à l'opinion, généralement admise, que la puberté arrive à 11—12 ans.

2. Voici les chiffres évaluant les diamètres du bassin le plus généralement constatés chez les arméniennes.

| | | |
|---|---|---|
| Diamètre: | bis—iliaque antér . . | 23.16 |
| | bis—iliaque médian . . | 26.10 |
| | antéro-postér. de Baudelocque . . . | 19.51 |
| Dimensions du foetus; | | |
| | poids . . . . . | 3430.00 |
| | longueur . . . . | 46.30 |
| D. occipito—frontal . . . . . . | | 11.21 |
| Circonférence de la tête foetale . . . . . | | 34.40 |

Durée d'accouchement chez

| | |
|---|---|
| la primipare . . | 24 h. 36′ |
| la multipare . . | 16 h. 42′ |

L'auteur trouve que le rétrécissement rélatif du bassin est compensé par le racourcissement du d. occipito-frontal du foetus et par une plus longue durée d'accouchement.

L'auteur emet l'opinion, que la vie sexuelle à l'Orient commençant fort tôt, retient le développement du squelette de la femme arménienne, lequel atteint chez elle ses dimensions normales seulement entre 25—30 ans.

Գլավլ. № 239 բ. Տիրաժ 250 Պատվ. № 4135

Տպագրական Տրեստի 2-րդ տպարան, Երևան

ՀՀ Ազգային գրադարան

-50-

И9-2
615